«ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
FONDATION « CENTRE D'ENSEIGNEMENT PROFESSIONNEL FRANCO-ARMENIEN »

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

06 ---09--- 2022թ.

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կ.Տ.

Եռամսյա դասընթաց


ԾՐԱԳԻՐ

«Ատամնատեխնիկական գործի կարողությունների և հմտությունների դասընթաց»

ք. Երևան 2022թ.

Տիգրան Մեծի 38, Երևան 0005, Հայաստանի Հանրապետություն Հեռ. +374-10-578533; Ֆաքս +374-10-578534;
38 rue Tigran Mets, Erevan 0005, République d'Arménie Tel:+374-10-578533; Fax:+374-10-578534;
E-mail info@fcepfa.am

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ



Ծրագրի բովանդակությունը

1. Գիպսե մոդելի ստացում
2. Մոմե թասակների և գամիկների ձևավորում

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ գիպսե մոդելի ստացման և մոմե թասակների և գամիկների ձևավորման գործում, սովորողի մոտ ձևավորել մասնագիտական կարողություններ և հմտություններ:

Ռեսուրսները

Ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Գործնական պարապմունքները իրականացվում են լաբորատոր պայմաններում անհրաժեշտ նյութերի և սարքավորումների առկայությամբ:

Դասընթացի մասնակիցները

Դասընթացին կարող են մասնակցել նրանք, ովքեր՝

- Ունեն անհրաժեշտ հետաքրքրվածություն ատամնատեխնիկական գործի նկատմամբ:
- Տիրապետում են հայերեն լեզվին:
- Ցանկանում են ստանալ կարողություններ և հմտություններ ատամնատեխնիկական գործի ոլորտում:
- Կարող են ոտքի վրա աշխատել և ունեն մատների բավարար շարժունակություն:

Դասընթացավարները

Դասընթացավարներն ունեն երկար տարիների մասնագիտական աշխատանքային փորձ և հանդիսանում են «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության դասավանդողներ ուսումնական հաստատությունում:

Շաբաթական ծրագիր

1.

Թեմա ՝Գիպսե մոդելի ստացում
Տևողությունը ՝ 5 շաբաթ
Շաբաթական բեռնվածությունը ՝ 9 ժամ

Օրեր / Ժամեր	Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	**Ընդամենը**
	-	3	3	-	3	9

Դասավանդման բնութագիր

Ծանոթացում նյութերի և գործիքների հետ:

Գործնական աշխատանք. դրոշմի գնահատում, կոմբինացված մոդելների պատրաստում: Դիագնոստիկ մոդելի ստացում: Անտագոնիստ մոդելի ստացում: Կոմբինացված մոդելի ստացում: Ստուգիչ մոդելի ստացում: Գեյլերի մոդելի ստացում:

2.

Թեմա ՝ Մոմե թասակների և գամիկների ձևավորում
Տևողությունը ՝ 7 շաբաթ
Շաբաթական բեռնվածությունը ՝ 9 ժամ

Օրեր / Ժամեր	Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	**Ընդամենը**
	-	3	3	-	3	9

Դասավանդման բնութագիր

Մոմե թասակների պատրաստում, գամիկների ձևավորում:

ՆՇՈՒՄ. Տվյալ դասընթացի ընթացքում ցուցաբերված դրական արդյունքի և զգալի առաջընթացի պարագայում կառաջարկվի շարունակել մասնագիտացումը անշարժ պրոթեզավորման ոլորտում հետևյալ ճյուղերով.

1. Ձուլում :
2. Մետաղի մշակում :
3. Ատամի անատոմիա :
4. Մոմից ատամի մոդելավորում :
5. Կերամիկա :

Կազմեց՝ Գառնիկ Խաչատրյան
արտադրական ուսուցման վարպետ